

ՊՕՂՈՍ ՊԵ. ԳԱՌՆԵՑԻ.— (Սպա կթղ. 1418—1430). հայրը Սասարչան. մայրը Թիմևա (ՄՁ. Թ. 1). ՊԿԳ (=1415) թուին Եգիպտոսի մէջ (ՄՁ. Թ. 1950). Ս. Աթոռոյ պատրիարքութիւնը կը վարէ (1417—1419). կը գնէ Գեթսեմանի ձորին Ջիթենեաց պարտէզը որուն մուրհակը 1413 թուականով կը պահուի մինչև ցայսօր վանքին ղիւանաթուղթերու մէջ, նոյն պարտէզը թէև քիչ վերջ կը յափշտակուի, բայց հայք վերստին կը գնեն զայն. Պօղոս պտրք. Արևելեան վարդապետներու խնդրանքովը կ'ուղեւորի Սիս եւ կը վերջացնէ Հայոց հայրապետանոցին մէջ տիրող երկպառակութիւնները. 1419ին կ'ընտրուի կթղ. ամենայն հայոց ինչպէս կը վկայէ Ս. Յակոբի վանքին ձառնիտի մը (Թ. 1) յիշատակարանը. «Տէր Պօղոս որ էր արքեպս. Երուսաղէմի, որ յետ սուղ ինչ ուուրց եղև կաթողիկոս ամենայն հայոց. ետ գրել զձառնտիրս զայս ի թուին հայոց ՊԿԸ (=1419).

Պօղոս կթղ. վերստին Երուսաղէմ կ'այցելէ (1423—24) իր ձեռնասուն վրդ-ին հետ. և այս առթիւ ընդօրինակել կուտայ Յովհաննէս արեղային Յայրաւարի մը և Սամուէլ Երզնկացիին Տարկիրի. և իբր յիշատակ կը տանի Սիս: Պօղոսի կաթողիկոսութեան օրով Ս. Յարութեան տաճարը երկու տարի փակ մնացած է, ինչպէս կը վկայէ Սամուէլ Ասեցի. «Ի սոյն ամի ՊԶԳ (=1424) իշխանութեան Սքանտարին. և ի Պարոնութեան Սուլթան Ահմատին եւ ի կաթողիկոսութեան տէր Պօղոսին յԵրուսաղէմ Յարութեան գուռն՝ բ. ամ փակեալ կայր.» (Անեցի. էջ 174): Պօղոս կթղ. ղեզակուր կը վախճանի 1430ին: Իր մասին տեսնել նաև Սիւաւան, էջ 541:

ՊՕՂՈՍ ՊԵ. ՎԱՆԵՑԻ.— (1768—1775). սերեալ յընկիւն եւ նոյն տեսակ. յիշատակարանի մը համաձայն՝ Պօղոս պտրք. ունի ինքնակենսագրութիւն մը, որուն համեմատ ան կը ձեռնադրուի 1739ին. յաջորդաբար կը վարէ ժաւաւացի, օգև. փակակալի, և հրատիրակի պաշտօնները. Նւ. Վանայ, Սեբաստիոյ և Թոխատի (1744—1752). եպս. կը ձեռնադրուի 1752 ին. դարձեալ Նւ. Ղրիմի և Ռումելիի (1755—1757). յետոյ Զմիւռնիա և Նիկոմիդիա 1759ին. դարաւարակալ (1762—67). պտրք. կ'ընտրուի 1768 ին. 1774ին, Եգիպտացի Ալի և Մեհմէտ պէյերու ապստամբութեան ժամանակ, Պօղոս պտրք. շատ նեղութիւններ կը քաշէ,